ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՌԵԿՏՈՐ

ՀՐԱՄԱՆ

ԹԻՎ 031/2020-Ա

«ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

06.04.2020թ. ք. Երևան

Ղեկավարվելով «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 8-րդ կետերով, «Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 28-րդ կետի 7-րդ և 8-րդ ենթակետերով, «Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի կանոնակարգի 2-րդ կետով, ինչպես նաև հաշվի առնելով «Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի առաջարկը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության ռեկտորի 2019 թվականի հունիսի 25-ի թիվ 062/1-2019 հրամանով հաստատված «Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի կանոնակարգի (այսուհետ նաև՝ Կանոնակարգ) 4-րդ գլուխը լրացնել 18.1 կետով հետևյալ բովանդակությամբ.

«18.1. Գիտական խորհրդի նիստի օրակարգում որևէ հարցի ընդգրկման անհրաժեշտության բացակայության պարագայում Գիտական խորհրդի նախագահի

կամ Գիտական խորհրդի անդամների առնվազն 1/3-ի առաջարկությամբ կազմակերպվում է գրավոր քվեարկություն (այսուհետ՝ գրավոր քվեարկություն):

Գրավոր քվեարկության իրականացման կարգը սահմանվում է սույն կանոնակարգի 8-րդ գլխով»:

2. Կանոնակարգի 5-րդ գլուխը լրացնել 20.1 կետով, հետևյալ բովանդակությամբ՝ «Գրավոր քվեարկության անցկացման և քվեարկության արդյունքների հաստատման առանձնահատկությունները սահմանվում են սույն կանոնակարգի 8-րդ գլխով»:

3. Կանոնակարգի 7-րդ գլուխը լրացնել 26.1 կետով, հետևյալ բովանդակությամբ՝ «Գրավոր քվեարկության արձանագրման առանձնահատկությունները կարգավորվում են Կանոնակարգի 8-րդ գլխով»:

4. Կանոնակարգը լրացնել 8-րդ գլխով՝ «Գիտական խորհրդում գրավոր քվեարկության անցկացման կարգը» վերտառությամբ, հետևյալ բովանդակությամբ.

«27. Գրավոր քվեարկությունն իրականացվում է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության միջոցով:

28. Գրավոր քվեարկություն իրականացնելու նպատակով Գիտական խորհրդի քարտուղարը, Գիտական խորհրդի նախագահի հանձնարարությամբ, Գիտական խորհրդի անդամներին է տրամադրում քվեարկության դրված հարցը, ինչպես նաև քննարկվող հարցի վերաբերյալ նյութերի փաթեթը:

29. Գրավոր քվեարկությանը Գիտական խորհրդի անդամների մասնակցությունը պարտադիր է՝ բացառությամբ նրանց մասնակցությունը անհնար դարձնող դեպքերի:

30. Գրավոր քվեարկության վերաբերյալ Գիտական խորհրդի անդամներն իրենց դիրքորոշումը ներկայացնում են առաջարկությամբ նշված ժամկետում:

Սահմանված ժամկետում Գիտական խորհրդի անդամի կողմից դիրքորոշում չներկայացվելու դեպքում համարվում է, որ նա քվեարկել է կողմ:

Գրավոր քվեարկություն կազմակերպելու Գիտական խորհրդի նախագահի կամ Գիտական խորհրդի անդամների առնվազն 1/3-ի նախաձեռնությունը համարվում է վերջիններիս կողմ քվեարկություն:

31. Գիտական խորհրդի անդամները քվեարկության իրենց արդյունքները ներկայացնում են գրավոր կազմված էլեկտրոնային փաստաթղթի ձևով, որը պետք է պարունակի հետևյալ տեղեկատվությունը՝ քննարկվող յուրաքանչյուր հարցի վերաբերյալ դիրքորոշում՝ «կողմ եմ» կամ «դեմ եմ» նշումով, ներկայացնողի անուն,

ազգանուն, գիտական աստիճան, զբաղեցրած պաշտոն: Գիտական խորհրդի անդամները քվեարկվող հարցի կապակցությամբ կարող են ներկայացնել նաև կարծիքներ, դիտարկումներ և եզրակացություններ:

32. Էլեկտրոնային փաստաթուղթն, այն կազմող անդամի կողմից, ուղարկվում է Գիտական խորհրդի քարտուղարի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին:

33. Առաջարկությամբ նշված ժամկետի ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում, Գիտական խորհրդի քարտուղարը ամփոփում է քվեարկության արդյունքները և ներկայացնում Գիտական խորհրդի նախագահին:

34. Գիտական խորհրդի անդամների պարզ մեծամասնության կողմից գրավոր քվեարկության դրված հարցին կողմ քվեարկելու և հարցի քննարկումը Գիտական խորհրդի նիստում անցկացնելու վերաբերյալ առաջարկություն չներկայացնելու դեպքերում որոշումը համարվում է ընդունված:

35. Գիտական խորհրդի քարտուղարը կազմում է գրավոր քվեարկության արձանագրություն՝ դրանում ներառելով քվեարկվող հարցի, Գիտական խորհրդի անդամների կողմից ներկայացված կարծիքների, դիտարկումների և եզրակացությունների, ինչպես նաև քվեարկության արդյունքների ամփոփման վերաբերյալ տեղեկատվություն:

Արձանագրությանը կցվում են Գիտական խորհրդի անդամների կողմից Գիտական խորհրդի քարտուղարին տրամադրված էլեկտրոնային փաստաթղթերի պատճենները:

36. Գիտական խորհրդի քարտուղարը արդյունքների ամփոփումից հետո՝ եռօրյա ժամկետում, դրանց մասին ծանուցում է Գիտական խորհրդի անդամներին՝ ներկայացնելով դրանց վերաբերյալ կազմված ամփոփ տեղեկանք»:

Ս. Առաքելյան